

## **ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է Նախարարությունում քաղաքացիական ծառայության հետևյալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին**

**Քարտուղարության փաստաթղթերի հսկողության և արձանագրային բաժնի մասնագետ (ծածկագիր՝ 22-34.1-Մ6-3)**

Հիմնական գործառույթները՝

1. Մասնակցում է քաղաքացիների նամակների, դիմում-բողոքների կատարման ժամկետների նկատմամբ հսկողության իրականացման աշխատանքներին.
2. մասնակցում է Նախարարի և Գլխավոր քարտուղարի հանձնարարականների կատարման ժամկետների նկատմամբ հսկողության իրականացման աշխատանքներին.
3. մասնակցում է Նախարարության, մարզպետարանների և ենթակա մարմինների բոլոր ստորաբաժանումների կողմից մեթոդական ուղեցույցերի կիրառման հետ կապված աշխատանքների մոնիտորինգի աշխատանքներին.
4. մասնակցում է Նախարարությունն ստացվող թեժ զանգերի միջոցով բարձրացված հարցերի բնույթի, ընթացքի և ավարտի վերաբերյալ վերլուծության աշխատանքներին.
5. մասնակցում է ժամկետային հանձնարարականների կատարման մասին ամփոփաթերթի պատրաստման և ուշացման պատճառների վերլուծության աշխատանքներին.
6. մասնակցում է Նախարարի մոտ, ինչպես նաև Նախարարությունում կայացած խորհրդակցությունների արձանագրման և դրանք հասցեատերերին տրամադրման աշխատանքներին.
7. մասնակցում է Նախարարության՝ պահպանության և ոչնչացման ենթակա փաստաթղթերի տեսակավորման, արխիվացման գործընթացի նախապատրաստման աշխատանքներին
8. պատասխանում է քաղաքացիներին իրենց դիմումների ընթացքի վերաբերյալ:

**Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար նաև պահանջվում է՝**

- միջնակարգ կրթություն,
- ՈւՆԿ գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ,
- «Արխիվային գործի մասին», «Պետական համակարգի ենթակա մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության

2018 թվականի հունիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակարգը հաստատելու մասին» N 667-L որոշման, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության քարտուղարության կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն:

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
- ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը՝ **մինչև 18.04.2021թ.**
- Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 26.03.2020թ.
- Աշխատավարձի չափը՝ 111115 (մեկ հարյուր տասնմեկ հազար մեկ հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ:
  - Աշխատանքի վայրը՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ. 010-511-355, Էլ. փոստ՝ [n.kirakosyan@mta.gov.am](mailto:n.kirakosyan@mta.gov.am)
  - Ընտրություն կատարելու եղանակն է՝ դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն

**Վերը նշված պաշտոնը կարող են զբաղեցնել՝** տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները: Զաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը 65 տարին է:

#### **Հանրային ծառայության ընդունվելու իրավունք չունի այն անձը, ով՝**

- 1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
- 2) դատական կարգով զրկվել է հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից,
- 3) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը հանրային ծառայության տվյալ պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել իր լիազորությունների իրականացմանը,
- 4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված է, չէ,
- 5) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն:

#### **Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝**

- դիմում նախարարության գլխավոր քարտուղարի անունով (դիմումը ներկայացվում է Էլեկտրոնային եղանակով [n.kirakosyan@mta.gov.am](mailto:n.kirakosyan@mta.gov.am) Էլեկտրոնային հասցեին)
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի /ների/, վկայականի /ների/ պատճենները բնօրինակների հետ միասին, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ համապատասխան մարմնից/ներից) պատճենները բնօրինակների հետ միասին,
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար 3+4 սմ չափսի,
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

**ՀՀ քաղաքացիների փաստաթղթերը ներկայացնում է անձամբ:** Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչև 12.30-ը, 15:00-ից մինչև 17:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման  
և ենթակառուցվածքների նախարարության  
գլխավոր քարտուղարին փոխարինող  
պարոն Յ. Բատիկյանին

----- -ից  
դիմողի անունը, հայրանունը, ազգանունը

-----  
դիմողի հասցեն

-----  
դիմողի անձնագրի տվյալները, հեռախոսահամարը

**ԴԻՄՈՒՄ**

Ծանոթանալով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից հրապարակված հայտարարությանը՝ խնդրում եմ Ձեզ ժամկետային աշխատանքային պայմանագրով նշանակել ինձ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության

-----  
-----  
-----  
Ժամանակավոր թափուր պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Ժամանակավոր թափուր պաշտոնում:

Հայտնում եմ, որ.

1. Համակարգչային և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

-----  
(ունեմ, չունեմ)

2. Տիրապետում եմ համակարգչային ծրագրերին (Վինդոուզ, Վոռդ, Էքսել, Աքսես և այլն)

3. Դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ

-----  
(ճանաչված եմ, ճանաչված չեմ)

4. ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով

-----  
(տառապում եմ, չեմ տառապում)

5. Այլ վճարովի աշխատանք (բացի գիտական, մանկավարժական, ստեղծագործական և ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող աշխատանքից)

---

(իրականացնում եմ, չեմ իրականացնում)

6. Անձամբ ձեռնարկատիրական գործունեությամբ \_\_\_\_\_  
(զբաղվում եմ, չեմ զբաղվում)

7. Ամիջական ենթակայության կամ վերահսկողության տակ մերձավոր ազգակցական կամ  
խնամիական կապերի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող) մեջ

---

(գտնվում եմ, չեմ գտնվում)

Նախագգուշացված եմ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար, ժամանակավոր  
թափուր պաշտոնում նշանակվելու դեպքում զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված  
կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող՝ \_\_\_\_\_  
ստորագրություն                      անուն, ազգանուն

«-----»----- 2020թ.